Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ո Ե Հ-1

Հանրապետական եռակողմ հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) նիստի

2021 թվական, հուլիսի 2, ժամը՝ 11:00

Նախագահում էր Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի տեղակալ Ռուբեն Սարգսյանը (Հանձնաժողովի նախագահ, Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի պաշտոնակատարի պարտականությունները կատարող Նարեկ Մկրտչյանի մշտական փոխարինող)

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի անդամներ և Հանձնաժողովի անդամներին մշտական փոխարինողներ՝

Անահիտ Անտոնյան	Արդարադատության նախարարության իրավական ապահովման վարչության պետ (Հանձնաժողովի անդամ, Արդարադատության նախարարի տեղակալ Վահե Դանիելյանի մշտական փոխարինող)
Քրիստինա Գյուրջյան	Առողջապահության նախարարության անձնակազմի կառավարման վարչության պետ (Հանձնաժողովի անդամ, Առողջապահության նախարարի առաջին տեղակալ Լենա Նանուշյանի մշտական փոխարինող)

Արմենուհի Պողոսյան	Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության վարչության պետի պարտականությունները կատարող (Հանձնաժողովի անդամ, Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալ Ժաննա Անդրեասյանի փոխարեն՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Հանձնաժողովի անդամ Ժ. Անդրեասյանի մշտական փոխարինողը Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության վարչության պետն է, որի պաշտոնը նշված պահին թափուր է)
Բորիս Խարատյան	Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի (այսուհետ՝ ՀԱՄԿ) նախագահի տեղակալ
Ժանետա Թորոսյան	Հայաստանի մշակույթի աշխատողների արհեստակցական կազմակերպությունների ճյուղային հանրապետական միության նախագահ
Շմավոն Մկրտչյան	Հայաստանի առևտրի, հասարակական սննդի, սպառկոոպերացիայի և ձեռներեցության աշխատողների արհեստակցական կազմակերպությունների ճյուղային հանրապետական միության նախագահ
Անահիտ Ասատրյան	Հայաստանի պետական հիմնարկների, տեղական ինքնակառավարման մարմինների և հանրային ծառայությունների աշխատողների արհեստակցական

	կազմակերպությունների ճյուղային հանրապետական միության նախագահ
Գագիկ Մակարյան	Հայաստանի գործատուների հանրապետական միության (այսուհետ՝ ՀԳՀՄ) նախագահ
Միեր Մարկոսյան	ՀԳՀՄ խորհրդի անդամ, «Երևանի կապի միջոցների գիտահետազոտական ինստիտուտ» ՓԲԸ գլխավոր տնօրեն
Ժաննա Սիմոնյան	ՀԳՀՄ անդամ, «Կոնցեռն Դիալոգ» ՓԲԸ-ի գործընկեր-փաստաբան
Տիգրան Շահբազյան	ՀԳՀՄ անդամ, Հայաստանի հաշվապահների ասոցիացիայի նախագահի տեղակալ (Հանձնաժողովի անդամ, ՀԳՀՄ խորհրդի անդամ, Հայաստանի հաշվապահների ասոցիացիայի նախագահ Վահագն Համբարձումյանի մշտական փոխարինող)
Գոհար Մկոյան	«Սոցիալական ձեռներեցների դպրոց»-ի հիմնադիր տնօրեն (Հանձնաժողովի անդամ, ՀԳՀՄ գործընկեր, «Հրայր Մարուխեան» հիմնադրամի ծրագրերի համակարգող Թադևոս Ավետիսյանի մշտական փոխարինող)

Հրավիրվածներ և նիստին մասնակցող այլ անձինք՝

Ժորա Սարգսյան	Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության (այսուհետ՝ ԱՍՀՆ) աշխատանքի և զբաղվածության վարչության պետ
Հռիփսիմե Հովհաննիսյան	Էկոնոմիկայի նախարարության ձեռներեցության զարգացման վարչության գլխավոր մասնագետ
Երանուհի Յայլախանյան	ԱՍՀՆ հասարակայնության հետ կապերի բաժնի գլխավոր մասնագետ
Լաուրա Հակոբյան	Հայաստանի բանկերի և ֆինանսավարկային կազմակերպությունների աշխատողների արհեստակցական կազմակերպությունների ճյուղային հանրապետական միության նախագահ (Հայաստանի պետական հիմնարկների, տեղական ինքնակառավարման մարմինների և հանրային ծառայությունների աշխատողների արհեստակցական կազմակերպությունների ճյուղային հանրապետական միության նախագահ, Հանձնաժողովի անդամ Անահիտ Ասատրյանի մշտական փոխարինող)
Կարինե Մադոյան	ՀԱՄԿ աշխատակազմի սոցիալ-տնտեսական և աշխատանքի պաշտպանության բաժնի պետ
Լուսինե Սարգսյան	Հայաստանի հաշվապահների ասոցիացիայի ներկայացուցիչ

Հանձնաժողովի քարտուղար՝

Արփինե Սարգսյան	ԱՍՀՆ աշխատանքի և զբաղվածության վարչության աշխատանքի և աշխատանքի վարձատրության քաղաքականության բաժնի գլխավոր մասնագետ

Բացակայում էին՝

Հանձնաժողովի անդամներ

Լենա Նանուշյան	Առողջապահության նախարարի առաջին տեղակալ
Վահե Դանիելյան	Արդարադատության նախարարի տեղակալ
Ավագ Ավանեսյան	Էկոնոմիկայի նախարարի տեղակալ
Ժաննա Անդրեասյան	Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալ
Համլետ Դանիելյան	Հայաստանի արդյունաբերության աշխատողների արհեստակցական կազմակերպությունների ճյուղային հանրապետական միության նախագահ
Թադևոս Ավետիսյան	ՀԳՀՄ գործընկեր, «Հրայր Մարուխեան» հիմնադրամի ծրագրերի համակարգող
Վահագն Համբարձումյան	ՀԳՀՄ խորհրդի անդամ, Հայաստանի հաշվապահների ասոցիացիայի նախագահ

Օրակարգի նախագծում ընդգրկված էին հետևյալ հարցերը.

1. **Հանրապետական եռակողմ հանձնաժողովի աշխատակարգի նախագծի քննարկում և հաստատում:**

2. **Հանրապետական կոլեկտիվ պայմանագրի կիրարկումն ապահովող գործողությունների ծրագրի մշակման ուղղությամբ իրականացվելիք աշխատանքների քննարկում:**

3. **Այլ հարցեր:**

Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի տեղակալ Ռուբեն Սարգսյանը, ողջունելով ներկաներին, նշեց, որ նոր ձևավորված Հանձնաժողովի առաջին նիստը խորհրդանշական է այն իմաստով, որ երկարատև ջանքերից հետո 2021 թվականի հուլիսի 1-ից արդեն սկսել է ամբողջական լիազորություններով գործել Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմինը՝ ներառելով նաև աշխատանքային օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ ամբողջական վերահսկողությունը, ինչը համարվում է կարևոր ձեռքբերում:

Այնուհետև, Ռ. Սարգսյանը հարց ուղղեց ներկաներին, թե արդյոք կան առաջարկներ Հանձնաժողովի նիստի՝ նախապես նիստի մասնակիցներին ուղարկված օրակարգի նախագծի վերաբերյալ:

Բարձրացված հարցի կապակցությամբ ՀԳՀՄ նախագահ Գ. Մակարյանը նշեց, որ իրենց կողմից առաջարկները ներկայացված են եղել գրավոր, որոնցից առաջինը վերաբերում էր օրակարգի 1-ին հարցին՝ Հանձնաժողովի աշխատակարգի նախագծին, իսկ 2-րդ առաջարկն այն էր, որ, հաշվի առնելով, որ Հանձնաժողովում կան նոր մարդիկ, Հանձնաժողովի նիստի օրակարգում ներառվեր նոր հարց սոցիալական գործընկերության մասին իրազեկման վերաբերյալ, որի շրջանակներում կներկայացվեր տեղեկատվություն սոցիալական գործընկերության մասին. դրա կարևորությունը, անհրաժեշտությունը, նպատակը, Հանձնաժողովի հիմնական գործառույթները, դերակատարությունը: Այս կապակցությամբ Գ. Մակարյանը նաև նշեց, որ թեև ԱՍՀՆ-ի կողմից, մինչև Հանձնաժողովի նիստը, Հանձնաժողովի անդամներին և նրանց մշտական փոխարինողներին ներկայացվել էր

տեղեկանք սոցիալական գործընկերության մասին, սակայն առաջարկն այն էր, որ Հանձնաժողովի նիստի օրակարգում ևս համապատասխան հարց ներառվեր:

Գ. Մակարյանի կողմից բարձրացված հարցի կապակցությամբ Ռ. Սարգսյանը նշեց, որ եռակողմ սոցիալական գործընկերության, վերջինիս կարևորության, Հանձնաժողովի նպատակի, գործառույթների մասին համապատասխան տեղեկատվությունը տեղեկանքի տեսքով Հանձնաժողովում ներկայացված պետական մարմինների ներկայացուցիչներին արդեն իսկ նախապես ուղարկված եղել է, և Հանձնաժողովում պետական կողմի ներկայացուցիչները բոլորն արդեն իսկ այդ առումով իրազեկված են: Միաժամանակ նշվեց, որ ՀԳՀՄ-ի և ՀԱՄԿ-ի կողմից Հանձնաժողովում ընդգրկված ներկայացուցիչներն էլ արդեն իսկ ունեն բավարար իրազեկվածություն այդ առումով, քանի որ նրանք առաջին անգամ չէ, որ ընդգրկված են Հանձնաժողովի կազմում: Բացի այդ, վերջիններիս ևս նշված տեղեկանքը Հանձնաժողովի նիստից առաջ ուղարկված եղել է:

Ելնելով վերը նշվածից՝ Ռ. Սարգսյանն առաջարկեց այդ ուղղությամբ հավելյալ ժամանակ չծախսել և օրակարգում առանձին հարց չներառել: Միաժամանակ առաջարկվեց Հանձնաժողովում պետական կողմից ընդգրկված թե՛ փոխնախարարների, թե՛ համապատասխան վարչության պետերի հետ սոցիալական գործընկերության մասով կազմակերպել առանձին քննարկում, ըստ անհրաժեշտության:

Սոցիալական գործընկերության կարևորությանն անդրադառնալով՝ ՀԱՄԿ նախագահի տեղակալ Բորիս Խարատյանի կողմից առաջարկվեց հետագայում քննարկման առարկա դարձնել եռակողմ սոցիալական գործընկերությանը վերաբերող բոլոր հարցերը համապատասխան իրավական ակտերով կարգավորելու հարցը: Որպես օրինակ, Բ. Խարատյանի կողմից նշվեց, որ այն երկրներում, որտեղ եռակողմ հանձնաժողովը գործում է առավել արդյունավետ, այդ երկրներից գրեթե բոլորում վերջինիս աշխատանքները կարգավորվում են կա՛մ առանձին օրենքով, կա՛մ այլ իրավական ակտերով:

Բ. Խարատյանի կողմից ներկայացված առաջարկության շրջանակներում Գ. Մակարյանը ևս նշեց, որ իր կարծիքով ևս կա սոցիալական գործընկերությունը կարգավորող օրենսդրության վերանայման անհրաժեշտություն: Մասնավորապես առաջարկվեց քննարկել

ՀՀ աշխատանքային օրենսգրքում այդ մասով փոփոխությունները ևս ներառելու հարցը՝ նշելով, որ այդ ուղղությամբ փոփոխությունները հնարավորություն կտան եռակողմ սոցիալական գործընկերությունը բերել առավել լավ մակարդակի:

Բ. Խարատյանի և Գ. Մակարյանի կողմից բարձրացված հարցերին անդրադառնալով՝ Ռ. Սարգսյանը նշեց, որ արդեն իսկ քննարկման է դրված ՀՀ աշխատանքային օրենսգրքում փոփոխությունների և լրացումների նախագիծը և ներկայում առաջարկությունների ստացման ու ամփոփման փուլում է: ԱՍՀՆ-ն ցանկացած պահի պատրաստ է ստացված առաջարկությունները քննարկելու, այդ թվում՝ առաջարկը ներկայացրած կողմից հետ: Ռ. Սարգսյանը միաժամանակ տեղեկացրեց, որ նշված փոփոխությունների փաթեթը, անշուշտ, քննարկվելու է նաև Հանձնաժողովում:

Ի հավելումն Ռ. Սարգսյանի կողմից նշվածի՝ ԱՍՀՆ աշխատանքի և զբաղվածության վարչության պետ Ժորա Սարգսյանը նշեց, որ ՀՀ աշխատանքային օրենսգրքում փոփոխությունների և լրացումների նախագծում արդեն իսկ անդրադարձ կատարվել է նաև սոցիալական գործընկերությանը վերաբերող կարգավորումներին: Սակայն, եթե սոցիալական գործընկերները գտնում են, որ կան հարցեր, որոնց անդրադարձ կատարված չէ և կա այլ փոփոխությունների կարիք, ապա համապատասխան առաջարկներն այդ ուղղությամբ կարող են ներկայացվել ԱՍՀՆ:

Ամփոփելով ծավալված քննարկումը և կարևորելով այն՝ Ռ. Սարգսյանն առաջարկեց ընթացիկ նիստում անդրադառնալ օրակարգում ընդգրկված կոնկրետ հարցերին: Մասնավորապես, քվեարկության դրվեց Հանձնաժողովի նիստի օրակարգը նախապես ուղարկված տարբերակով հաստատելու հարցը: Քվեարկության դրված հարցն ընդունվեց նիստին ներկա և քվեարկելու իրավունք ունեցող անձանցից բոլորի կողմից, բացի Գ. Մակարյանից: Վերջինս դեմ էր, քանի որ, իր առաջարկն էր, որպեսզի նիստի օրակարգում ներառվեր նաև նոր հարց՝ սոցիալական գործընկերության մասին իրազեկմանը վերաբերող:

Քանի որ ԱՍՀ նախարարի տեղակալ Ռ. Սարգսյանի՝ Հանձնաժողովի նիստի օրակարգը նախապես ուղարկված հարցերով հաստատելու առաջարկին կողմ էին նիստին

ներկա և քվեարկելու իրավունք ունեցող մյուս բոլոր մասնակիցները՝ Գ. Մակարյանից բացի, Հանձնաժողովի որոշումն համարվեց ընդունված և Հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատվեց հետևյալ հարցերով.

1. Հանրապետական եռակողմ հանձնաժողովի աշխատակարգի նախագծի քննարկում և հաստատում:

2. Հանրապետական կոլեկտիվ պայմանագրի կիրարկումն ապահովող գործողությունների ծրագրի մշակման ուղղությամբ իրականացվելիք աշխատանքների քննարկում:

3. Այլ հարցեր:

1. Հանրապետական եռակողմ հանձնաժողովի աշխատակարգի նախագծի քննարկում և հաստատում:

Օրակարգի 1-ին հարցի վերաբերյալ ԱՍՀ նախարարի տեղակալ Ռ. Սարգսյանի կողմից հարց հնչեցվեց, թե արդյոք կան առաջարկներ Հանրապետական եռակողմ հանձնաժողովի աշխատակարգի նախագծի վերաբերյալ:

Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունից Հանձնաժողովի նիստին մասնակցող Արմենուհի Պողոսյանի կողմից բարձրացվեց հետևյալ հարցը.

Նշվեց, որ Հանձնաժողովի անդամ հանդիսացող Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալ Ժ. Անդրեասյանի մշտական փոխարինողը Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության վարչության պետն էր, որն ազատվել է տվյալ պաշտոնից: Ներկայում նշված վարչության պետի պարտականությունների կատարողը ինքն է: Հարց բարձրացվեց, թե տվյալ պարագայում ինչպես պետք է կանոնակարգվի իր մասնակցությունը Հանձնաժողովի նիստերին:

Քննարկման արդյունքներով առաջարկվեց, որ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունից պաշտոնական գրությամբ տեղեկացվի այդ մասին, որը հիմք կհանդիսանա, որ Արմենուհի Պողոսյանը մասնակցի Հանձնաժողովի նիստերին՝ մինչև Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության նախնական

(արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության վարչության պետի թափուր հաստիքի համալրումը:

Հանձնաժողովի աշխատակարգի նախագծի վերաբերյալ Գ. Մակարյանը նշեց, որ ՀԳՀՄ-ի կողմից առաջարկվել էր, որպեսզի աշխատակարգի նախագծում կատարվի փոփոխություն՝ նիստերի անցկացման վայրին վերաբերող կետում: Մասնավորապես Գ. Մակարյանն առաջարկեց, որ համապատասխան կետն ամրագրվի այնպես, որ սահմանվի, որ Հանձնաժողովի նիստերն անցկացվում են նախագահի մոտ կամ կողմի հայտի հիման վրա ԱՍՀՆ-ում՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ նիստերին մասնակցելու են Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարը, ինչպես նաև ԱՍՀՆ մի շարք աշխատողներ:

Գ. Մակարյանի առաջարկին ի հավելումն Տիգրան Շահբազյանը նշեց, որ Հանձնաժողովի նիստերը ԱՍՀՆ-ում անցկացնելու առաջարկության նպատակը Հանձնաժողովի նիստերին պետական կողմի ներկայացուցիչների մասնակցությունն ապահովելն է: Վերջինիս կարծիքով, եթե Հանձնաժողովի նիստերն անցկացվեն այլ վայրում (ՀԳՀՄ-ում կամ ՀԱՄԿ-ում) հնարավոր է պետական կողմի ներկայացուցիչների մասնակցությունը հնարավոր չլինի ապահովել:

Գ. Մակարյանը միաժամանակ նշեց, որ նիստերն այլ վայրում անցկացնելու պարագայում իր կարծիքով նաև ռիսկեր կարող են առաջանալ այն մասով, որ, օրինակ, պետական կողմից Հանձնաժողովի անդամների փոխարեն նիստերին այլ անձանց մասնակցելու պարագայում քննարկված հարցերի վերաբերյալ տեղեկատվությունը կարող է չհասնել Հանձնաժողովի անդամին կամ համապատասխան ղեկավար կազմին:

ՀԳՀՄ-ի կողմից ներկայացված առաջարկության կապակցությամբ Բ. Խարատյանը նշեց, որ մինչև Հանձնաժողովի աշխատակարգի նախագծին անդրադառնալը՝ հարկ է նկատել, որ Հանրապետական կոլեկտիվ պայմանագրի 5.15-րդ կետն արդեն իսկ սահմանում է Հանձնաժողովի աշխատակարգի նախագծի քննարկվող կետին համանման կարգավորում: Մասնավորապես Հանրապետական կոլեկտիվ պայմանագրի 5.15-րդ կետով սահմանված է, որ Հանձնաժողովն իր աշխատանքները կազմակերպում է նիստերի միջոցով, որոնք գումարվում են առնվազն երեք ամիսը մեկ անգամ, ինչպես նաև ըստ անհրաժեշտության, **որպես կանոն Հանձնաժողովի նախագահի մոտ, եթե նիստի կայացման տեղի վերաբերյալ Հանձնաժողովն այլ որոշում չի կայացնում**:

Անդրադառնալով ՀԳՀՄ-ի կողմից ներկայացված առաջարկին և բարձրացված խնդրին՝ Ռուբեն Սարգսյանը նշեց, որ, որպես լիազոր մարմնի ներկայացուցիչ, կողմ չէ, որ Հանձնաժողովի նիստերը մշտապես (անկախ այն հանգամանքից, թե ռոտացիոն կարգով ով է իրականացնում Հանձնաժողովի նախագահությունը) անցկացվեն ԱՍՀՆ-ում: Նա նշեց, որ թե՛ իր, թե՛ ԱՍՀ նախարարի համար որևէ կապ չունի, թե որտեղ կանցկացվեն Հանձնաժողովի նիստերը և որ նիստերի անցկացման վայրը որևէ խոչընդոտ չի կարող հանդիսանալ նիստերին մասնակցության համար: Բացի այդ, վերջինս ընդգծեց, որ իր կարծիքով դրանով կապահովվի նաև Հանձնաժողովի նախագահության ռոտացիայի խորհրդանշական իմաստը: Միաժամանակ անդրադառնալով նաև նիստերին Հանձնաժողովի անդամներին փոխարինողների մասնակցության պարագայում տեղեկատվությունը համապատասխան ղեկավար կազմին հնարավոր չփոխանցելու կամ տեղ չհասցվելու խնդրին՝ Ռ. Սարգսյանն այս կապակցությամբ ևս նշեց, որ փոխարինողների մասնակցությունն ամենևին էլ չի կարող նշանակել, որ տեղեկատվությունը չի փոխանցվում Հանձնաժողովի համապատասխան անդամին կամ համապատասխան ղեկավար կազմին: Տեղեկատվությունը փոխանցվում է մի քանի եղանակներով՝ թե՛ ուղիղ համապատասխան փոխարինողների կողմից, թե՛ նիստերի արձանագրությունների միջոցով:

Ամփոփելով վերը նշվածը՝ Ռ. Սարգսյանն առաջարկեց, եթե ՀԳՀՄ-ի կողմը կցանկանա, ապա ներկայացված առաջարկությունը կարող է դրվել քվեարկության:

Ներկայացված առաջարկության կապակցությամբ ՀԳՀՄ-ի կողմը նշեց, որ այս փուլում չի պնդի իր առաջարկությունը և կսպասեն մինչև համապատասխան նիստերի անցկացումը, և, եթե առաջանան խնդիրներ, այդ ժամանակ նոր անդրադարձ կկատարվի առաջացած խնդիրներին:

Օրակարգի 1-ին հարցի շուրջ ծավալված քննարկումներն ամփոփելով՝ Օրակարգի 1-ին հարցի վերաբերյալ Հանձնաժողովը որոշեց՝

1.1. Հաստատել Հանրապետական եռակողմ հանձնաժողովի աշխատակարգը (կցվում է):

Միաժամանակ օրակարգի 1-ին հարցի շրջանակներում, Հանձնաժողովի աշխատակարգին համաձայն՝ ԱՍՀ նախարարի տեղակալ Ռ. Սարգսյանի առաջարկությամբ՝ Հանձնաժողովի նիստին ներկա և քվեարկելու իրավունք ունեցող բոլոր մասնակիցների կողմ քվեարկության արդյունքում Հանձնաժողովի քարտուղար ընտրվեց ԱՍՀՆ աշխատակազմի աշխատանքի և զբաղվածության վարչության աշխատանքի և աշխատանքի վարձատրության քաղաքականության բաժնի գլխավոր մասնագետ Արփինե Սարգսյանը:

2. Հանրապետական կոլեկտիվ պայմանագրի կիրարկումն ապահովող գործողությունների ծրագրի մշակման ուղղությամբ իրականացվելիք աշխատանքների քննարկում:

Օրակարգի 2-րդ հարցի շրջանակներում ԱՍՀ նախարարի տեղակալ Ռ. Սարգսյանն առաջարկեց քննարկել աշխատանքների իրականացման երկու ձևաչափեր: Մասնավորապես.

1. Հանրապետական կոլեկտիվ պայմանագրի կիրարկումն ապահովող գործողությունների ծրագրի նախագծի վերաբերյալ իրենց առաջարկությունները կողմերը ներկայացնեն ԱՍՀՆ, որտեղ դրանք կամփոփվեն, որից հետո արդեն իսկ ամփոփված առաջարկների հիման վրա կազմված Հանրապետական կոլեկտիվ պայմանագրի կիրարկումն ապահովող գործողությունների ծրագրի նախագիծը կներկայացվի քննարկման Հանձնաժողովում:
2. Հանրապետական կոլեկտիվ պայմանագրի կիրարկումն ապահովող գործողությունների ծրագրի նախագծի մշակման համար ձևավորել կողմերի ներկայացուցիչներից բաղկացած աշխատանքային խումբ, որը կմշակի գործողությունների ծրագրի նախագիծը, որից հետո այն կներկայացվի Հանձնաժողովում քննարկման:

Ներկայացված առաջարկությունների կապակցությամբ Գ. Մակարյանը նշեց, որ աշխատանքների ուղղությունների առաջարկված երկու ձևաչափերն էլ ընդունելի են, սակայն իրենց կողմից առավել նախընտրելի է 1-ինը:

Բ. Խարատյանը նույնպես նշեց, որ երկու ձևաչափերն էլ ընդունելի են, սակայն առավել նախընտրելի է 2-րդ տարբերակը:

Հնչեցված կարծիքների հիման վրա Ռ. Սարգսյանն առաջարկեց համադրել աշխատանքների ուղղությունների երկու տարբերակները: **Մասնավորապես առաջարկվեց, որ նիստից հետո երկու շաբաթվա ընթացքում կողմերը առաջարկները ներկայացնեն ԱՍՀՆ, այնուհետև 3-րդ շաբաթում ներկայացված առաջարկները քննարկվեն կողմերի ներկայացուցիչներից կազմված աշխատանքային խմբում, որից հետո արդեն 4-րդ շաբաթում Հանրապետական կոլեկտիվ պայմանագրի կիրարկումն ապահովող գործողությունների ծրագրի նախագիծը կներկայացվի Հանձնաժողովի նիստում քննարկման:**

Ռ. Սարգսյանի կողմից ներկայացված առաջարկների շրջանակներում կողմերն անդրադարձան նաև ձևավորվելիք աշխատանքային խմբի կազմին և անդամների թվին: Քննարկումների արդյունքում որոշվեց, որ աշխատանքային խմբի կազմում ընդգրկվեն յուրաքանչյուր կողմից 3-ական անդամ:

Ամփոփելով օրակարգի 2-րդ հարցի շուրջ ծավալված քննարկումները՝ օրակարգի 2-ին հարցի վերաբերյալ Հանձնաժողովը որոշեց.

2.1. Հանրապետական կոլեկտիվ պայմանագրի կիրարկումն ապահովող գործողությունների ծրագրի մշակման աշխատանքներն իրականացնել համաձայն ԱՍՀ նախարարի տեղակալ Ռ. Սարգսյանի վերոնշյալ առաջարկի:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

7/23/2021

X

ՈՍՈՒԲԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ Signed by: SARGSYAN RUBEN 1909770124 Ռ. ՍԱՐԳՍՅԱՆ

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ Ա. ՍԱՐԳՍՅԱՆ

Հաստատված է
Հանրապետական եռակողմ հանձնաժողովի
«02» Հուլիսի 2021 թ. նիստում

ԱՇԽԱՏԱԿԱՐԳ

ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԵՌԱԿՈՂՄ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

I. Ընդհանուր դրույթներ

1. Սույն աշխատակարգով սահմանվում է Հանրապետական եռակողմ հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) աշխատանքի կազմակերպման և իրականացման կարգը:

II. Հանձնաժողովի նպատակը և խնդիրները

2. Հանձնաժողովի նպատակն է՝

1) խթանել սոցիալական գործընկերության կայացումն ու զարգացումը.

2) ապահովել Հայաստանի Հանրապետության կառավարության, Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի և Հայաստանի գործատուների հանրապետական միության (այսուհետ՝ Կողմեր) միջև կնքված Հանրապետական կոլեկտիվ պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) կատարումը:

3. Հանձնաժողովի խնդիրներն են՝

1) հանրապետական մակարդակում կոլեկտիվ բանակցությունների կազմակերպման և վարման ապահովումը.

2) Պայմանագրի կատարման ընթացքում ծագած խնդիրների քննարկումը և Կողմերին առաջարկների ներկայացումը.

3) ճյուղային, տարածքային և կազմակերպությունների մակարդակում կոլեկտիվ բանակցություններ կազմակերպելու և վարելու մեթոդաբանության ապահովումը:

III. Հանձնաժողովի լիազորությունները

4. Հանձնաժողովը՝

1) մշակում և հաստատում է Պայմանագրի կիրարկումն ապահովող գործողությունների ծրագիրը.

2) պետական կառավարման համակարգի համապատասխան մարմինների հետ քննարկում է սոցիալ-աշխատանքային լրացուցիչ երաշխիքների տրամադրման մեխանիզմների ներդրման և կիրառման հետ կապված հարցերը.

3) քննարկում է սոցիալ-աշխատանքային և դրա հետ անմիջականորեն կապված սոցիալ-տնտեսական հարաբերությունները կարգավորող իրավական ակտերի նախագծերը և ներկայացնում դիրքորոշում դրանց վերաբերյալ.

4) քննարկում է Պայմանագրի նախագծի մշակման և կատարման ընթացքում յուրաքանչյուր Կողմի ներկայացրած առաջարկությունները.

5) Պայմանագրի Կողմերի հաստատմանն է ներկայացնում Պայմանագրում փոփոխությունների և լրացումների նախագծեր.

6) համագործակցում է ճյուղային, տարածքային երկկողմ հանձնաժողովների հետ՝ կոլեկտիվ բանակցությունների վարման, համապատասխան պայմանագրի նախագծի մշակման և իրականացման ընթացքում.

7) մասնակցում է Կողմերի կողմից կազմակերպվող սոցիալ-աշխատանքային և դրա հետ անմիջականորեն կապված սոցիալ-տնտեսական հարաբերությունների կարգավորման վերաբերյալ հարցերի քննարկմանը.

8) հրավիրում է Կողմերի ներկայացուցիչներին, ինչպես նաև փորձագետներին և այլ կազմակերպությունների ներկայացուցիչներին՝ մասնակցելու Հանձնաժողովի աշխատանքներին, անհրաժեշտության դեպքում Հանձնաժողովի անդամ չհանդիսացող անձանցից ձևավորում է աշխատանքային խմբեր.

9) զանգվածային լրատվության և տարբեր հարթակների միջոցներով, ըստ անհրաժեշտության, հրապարակում է Հայաստանի Հանրապետությունում սոցիալական գործընկերության զարգացման և սոցիալ-աշխատանքային ու դրա հետ կապված սոցիալ-տնտեսական հարաբերությունների վերաբերյալ տեղեկատվություն.

10) իրականացնում է հսկողություն Պայմանագրի կատարման նկատմամբ:

IV. Հանձնաժողովի աշխատանքների կազմակերպումը և ղեկավարումը

5. Հանձնաժողովն իր աշխատանքները կազմակերպում է նիստերի միջոցով, որոնք գումարվում են առնվազն երեք ամիսը մեկ անգամ, ինչպես նաև ըստ անհրաժեշտության, որպես կանոն Հանձնաժողովի նախագահի մոտ, եթե նիստի կայացման տեղի վերաբերյալ Հանձնաժողովն այլ որոշում չի կայացնում:

6. Հատուկ դեպքերում Հանձնաժողովի նիստերը կարող են անցկացվել առցանց եղանակով:

7. Հանձնաժողովի նիստերը դռնբաց են, եթե դրանց վերաբերյալ Հանձնաժողովն այլ որոշում չի կայացրել:

8. Հանձնաժողովի նիստերն արձանագրվում են:

9. Հանձնաժողովի նիստն իրավազոր է, եթե յուրաքանչյուր Կողմից մասնակցում են երեքից ոչ պակաս անդամներ:

10. Հանձնաժողովի յուրաքանչյուր անդամ ունի մեկ ձայնի իրավունք:

11. Հանձնաժողովի անդամի բացակայության դեպքում նիստին մասնակցում է նրա մշտական փոխարինողը, որը Հանձնաժողովի անդամին փոխարինման դեպքում ունի նույն լիազորությունները:

12. Պայմանագրի գործողության ընթացքում չորսից ավելի նիստի չմասնակցելու դեպքում Հանձնաժողովի նիստում քննարկվում է Հանձնաժողովի անդամի փոփոխության հարցը:

13. Հանձնաժողովի անդամներին մշտական փոխարինողներն իրենց ցանկությամբ կարող են մասնակցել Հանձնաժողովի բոլոր նիստերին:

14. Արտահերթ նիստ կարող է գումարվել Հանձնաժողովի Կողմերից մեկի՝ առնվազն երեք ներկայացուցիչների գրավոր առաջարկությամբ: Արտահերթ նիստը գումարվում է առաջարկը ներկայացնելուց հետո երկշաբաթյա ժամկետում:

15. Նիստի օրակարգի նախագիծը ձևավորում է Հանձնաժողովի նախագահը՝ Հանրապետական կոլեկտիվ պայմանագրի կիրարկումն ապահովող գործողությունների ծրագրի, ինչպես նաև Հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված առաջարկությունների հիման վրա:

16. Հանձնաժողովի նիստի օրակարգի նախագիծը, ինչպես նաև նիստի օրակարգում ընդգրկված հարցերին վերաբերող նյութերը (առկայության դեպքում) Հանձնաժողովի քարտուղարի միջոցով, ոչ ուշ, քան նիստից 5 աշխատանքային օր առաջ էլեկտրոնային եղանակով ուղարկվում են Հանձնաժողովի անդամներին և նիստին հրավիրված անձանց: Հանձնաժողովի անդամներին և նիստին հրավիրված անձանց են ուղարկվում նաև Հանձնաժողովի նիստի օրակարգի վերաբերյալ ներկայացված և օրակարգում չընդգրկված առաջարկությունները:

17. Հանձնաժողովի նիստի օրակարգում ներառված հարցը զեկուցում է տվյալ հարցը առաջադրած Կողմի ներկայացուցիչը:

18. Նիստում լրացուցիչ հարց ներկայացնելու նախաձեռնությամբ կարող է հանդես գալ Հանձնաժողովի յուրաքանչյուր անդամ:

19. Հարցի քննարկման ընթացքում լրացուցիչ նյութեր կամ տեղեկատվություն պահանջվելու դեպքում, հարցի քննարկումը կարող է տեղափոխվել Հանձնաժողովի հաջորդ կամ արտահերթ նիստ՝ Հանձնաժողովի համաձայնությամբ:

20. Հանձնաժողովի նիստի արձանագրության նախագիծը, մինչև ստորագրվելը, կարծիքի է ներկայացվում Հանձնաժողովի նիստին մասնակցած անձանց, որի վերաբերյալ առաջարկությունները ներկայացվում են 4 աշխատանքային օրվա ընթացքում:

21. Սույն աշխատակարգի 20-րդ կետում նշված ժամկետում Հանձնաժողովի նիստի արձանագրության նախագծի վերաբերյալ առաջարկություններ չներկայացվելու դեպքում համարվում է, որ առաջարկություններ չկան:

22. Յուրաքանչյուր նիստ սկսվում է Հանձնաժողովի կողմից նիստի օրակարգի նախագծի հաստատումով և նախորդ նիստում ընդունված որոշումների կատարման ընթացքի մասին քարտուղարի զեկուցումով:

23. Նիստի արձանագրության, Հանձնաժողովի որոշումների էլեկտրոնային տարբերակները քարտուղարը նիստի ավարտից հետո, 10 օրվա ընթացքում ուղարկում է Հանձնաժողովի անդամներին:

24. Հանձնաժողովի որոշումը համարվում է ընդունված, եթե դրան կողմ են քվեարկել հանձնաժողովի նիստին մասնակցող յուրաքանչյուր Կողմի երեքից ոչ պակաս անդամներ:

25. Հանձնաժողովի այն անդամը, որը համաձայն չէ ընդունած որոշման հետ ներկայացնում է իր գրավոր հատուկ կարծիքը, որը կցվում է որոշմանը և գրառվում նիստի արձանագրության մեջ:

26. Հանձնաժողովի որոշումները ստորագրվում են Հանձնաժողովի նախագահի և քարտուղարի կողմից:

27. Հանձնաժողովի նիստերին, առանձին հարցերի քննարկումների ժամանակ, կարող են մասնակցել հրավիրված անձինք՝ պետական պաշտոնյաներ, հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ, փորձագետներ, ինչպես նաև այլ անձինք՝ ըստ անհրաժեշտության:

28. Հանձնաժողովի նիստերի նյութատեխնիկական և կազմակերպչական մասն ապահովում է նախագահող կողմը:

V. Հանձնաժողովի նախագահի լիազորությունները

29. Հանձնաժողովի նախագահն իր գործունեությունն իրականացնում է Հանրապետական կոլեկտիվ պայմանագրով սահմանված լիազորությունների համաձայն:

VI. Կողմի ղեկավարը

30. Հանձնաժողովում յուրաքանչյուր Կողմի աշխատանքները կազմակերպում է ղեկավարը, որն ընտրվում է Կողմի անդամների կազմից:

31. Կողմի ղեկավարը՝

1) կազմակերպում է Հանձնաժողովում տվյալ Կողմի անդամների աշխատանքները.

2) Հանձնաժողովի նախագահին առաջարկություններ է ներկայացնում Հանձնաժողովի աշխատանքային ծրագրերի նախագծերի, նիստերի օրակարգերի վերաբերյալ.

3) կազմակերպում է Կողմերի ներկայացուցիչների հետ խորհրդակցություններ՝ Հանձնաժողովի քննարկմանը ներկայացված հարցերի վերաբերյալ:

VII. Հանձնաժողովի անդամը

32. Հանձնաժողովի անդամը՝

1) մասնակցում է Հանձնաժողովի նիստերին, ինչպես նաև Հանձնաժողովի նիստերի օրակարգի ձևավորմանը, առաջարկություններ է ներկայացնում նիստի օրակարգում լրացուցիչ հարցեր ընդգրկելու վերաբերյալ.

2) «Հանրապետական եռակողմ հանձնաժողով ձևավորելու և Հանձնաժողովի անդամներին մշտական փոխարինողների ցուցակը հաստատելու մասին» համաձայնագրում նշված պաշտոնից ազատվելու պահից դադարում է համարվել Հանձնաժողովի անդամ:

VIII. Հանձնաժողովի անդամին մշտական փոխարինողը

33. Հանձնաժողովի անդամին մշտական փոխարինողը՝

1) Հանձնաժողովի անդամի բացակայության դեպքում մասնակցում է Հանձնաժողովի նիստերին.

2) Հանձնաժողովի անդամին փոխարինման դեպքում ունի նույն լիազորությունները.

3) «Հանրապետական եռակողմ հանձնաժողով ձևավորելու և Հանձնաժողովի անդամներին մշտական փոխարինողների ցուցակը հաստատելու մասին» համաձայնագրում նշված պաշտոնից ազատվելու պահից դադարում է համարվել Հանձնաժողովի անդամին մշտական փոխարինող:

IX. Հանձնաժողովի քարտուղարը

34. Հանձնաժողովի քարտուղարը փոփոխվում է Հանձնաժողովի նախագահության փոփոխության հետ միաժամանակ:

35. Հանձնաժողովի քարտուղարը նշանակվում է Հանձնաժողովի նախագահի առաջարկությամբ՝ Հանձնաժողովում Կողմերից յուրաքանչյուրի նախագահության ժամանակ համապատասխանաբար առաջին նիստում, Հանձնաժողովի նախագահությունն իրականացնող կողմից:

36. Հանձնաժողովի քարտուղարը՝

1) արձանագրում է Հանձնաժողովի նիստերը և դրանց հիման վրա կազմում որոշման նախագծեր.

2) ստորագրում է Հանձնաժողովի նիստերի արձանագրությունները.

3) նախապատրաստում է նիստի օրակարգին վերաբերող համապատասխան նյութեր և կազմակերպում նյութերի էլեկտրոնային եղանակով տրամադրումը Հանձնաժողովի անդամներին և նիստին հրավիրված անձանց.

4) համակարգում է ըստ անհրաժեշտության ձևավորվող աշխատանքային խմբերի աշխատանքը.

5) հետևում է Հանձնաժողովի որոշումների կատարման ընթացքին և այդ մասին զեկուցում Հանձնաժողովի նախագահին.

6) հաշվառում է Հանձնաժողովի կայացրած որոշումները: